«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
կենսաթոշակային ֆոնդի կառավարչի տվյալներ

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲ ընկերությունը հիմնադրվել է Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարչի՝ «Ամունդի» բաժնետիրական ընկերության և Հայաստանի առաջատար բանկերից մեկի՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերության կողմից: Ընկերության նպատակն է, զուգակցելով «Ամունդի» բաժնետիրական ընկերության՝ ակտիվների կառավարման ոլորտում միջազգային լավագույն փորձն ու Հայաստանի ֆինանսական շուկայում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերության դիրքը, հաճախորդներին մատուցել առաջնակարգ ծառայություններ, նպաստել Հայաստանի ֆինանսական շուկայի զարգացմանը և աջակցել Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը: «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲ ընկերության առաքելությունն է՝ լինել Հայաստանի ֆինանսական շուկայի առաջատար ակտիվների կառավարիչը և երկարաժամկետ գործընկերը՝ ապահովելով ներդրումների կայուն և հնարավորինս առավելագույն եկամտաբերություն:

Գործադիր տնօրեն Ֆիլիպ Ռուսո

Ֆիլիպ Ռուսոն իր մասնագիտական գործունեությունը սկսել է 1987թ. «Դայնաբուրս» բաժնետիրական ընկերությունում, որտեղ նա հիմնել է ածանցյալ գործիքների համար բեք օֆիս և ղեկավարել պահառության բաժինը:

Նա առաջին անգամ միացել է Կրեդիտ Ագրիկոլի թիմին՝ որպես բանկի արժեթղթերի շուկայի բաժնում ներքին աուդիտոր, այնուհետև, որպես բաժնային կապիտալի վերլուծաբան, մասնակցել է ֆոնդերի ֆոնդի ստեղծման գործընթացին: 2003թ. Ֆիլիպ Ռուսոն անցել է աշխատանքի «Ամունդի Ալթերնաթիվ Ինվեստմենթս» ընկերությունում՝ որպես Գլխավոր վարչական տնօրեն, այնուհետև 2007թ. նշանակվել է Ֆրանսիայում և դրանից դուրս գտնվող Ամունդի խմբի որոշ դուստր ընկերություններում Գործառնական ռիսկի գծով կառավարիչ: Ֆիլիպ Ռուսոն ստացել է ֆինանսներ մասնագիտացմամբ հետբուհական կրթություն Կառավարման բարձրագույն դպրոցում (Ecole Supérieure de Gestion) և մագիստրոսի աստիճան՝ շուկայական գործարքների կազմակերպում և աուդիտ մասնագիտացմամբ: Նա նաև Ֆինանսական վերլուծաբանների ֆրանսիական ասոցիացիայի (Société Française des Analystes Financiers) անդամ է:

Տնօրենների խորհրդի նախագահ Ստեփան Գիշյան

Ունենալով ֆինանսական ոլորտում հարուստ աշխատանքային փորձ՝ 1996թ.-ին Ստեփան Գիշյանը ստանձնել է «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվ բանկի գործադիր տնօրենի պաշտոնը՝ ղեկավարելով բանկը ստեղծման և զարգացման ողջ ընթացքում: 2006թ. «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվ բանկը վերակազմավորվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերության, իսկ Ստեփան Գիշյանը շարունակել է զբաղեցնել գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը: 2003թ.-ից մինչ օրս Ստեփան Գիշյանը հանդիսանում է նաև «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿՓԲԸ խորհրդի նախագահը, իսկ 2006թ.-ից մինչ օրս՝ «Հայաստանի Ալիանս Ֆրանսեզ» ՓԲ ընկերության նախագահը: Ստեփան Գիշյանը 2009թ.-ից մինչ օրս հանդիսանում է Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի անդամ: 2006-2007թթ. Ստեփան Գիշյանը նախագահել է Հայաստանի բանկերի միությունը: Ստեփան Գիշյանը Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից պարգևատրվել է Անանիա Շիրակացու մեդալով, իսկ Ֆրանսիայի Հանրապետության Նախագահի կողմից՝ «Վաստակի համար» ազգային շքանշանով:

«Ամունդի» բաժնետիրական ընկերություն

750 միլիարդ եվրոյից ավելի կառավարման ներքո ակտիվներով «Ամունդի» բաժնետիրական ընկերությունը ակտիվների կառավարման ոլորտում առաջինն է Եվրոպայում և իններորդը՝ աշխարհում: Ներկայացված լինելով ավելի քան 30 երկրների հիմնական ներդրումային կենտրոններում՝ Ամունդին առաջարկում է ծառայությունների լայն շրջանակ, որն ընդգրկում է ակտիվների և արժույթների բոլոր հիմնական տեսակները: Ամունդին մշակել է խնայողությունների կառավարման գործիքներ, որոնք ուղղված են ամբողջ աշխարհում 100 միլիոնից ավելի անհատ հաճախորդների ներդրումային պահանջների բավարարմանը: Ինստիտուցիոնալ ներդրողներին առաջարկվող նորարարական և բարձր եկամտաբեր պրոդուկտները հարմարեցված են նրանց առանձնահատուկ պահանջներին և ռիսկի նկատմամբ հակվածությանը:

Կազմակերպությունը առաջատար մասնակից է ակտիվների կառավարման ոլորտում, որը հայտնի է՝

- ծառայությունների եկամտաբերությամբ և թափանցիկությամբ,
- հաճախորդների հետ հարաբերությունների բարձր որակով,
- մատուցվող ծառայությունների արդյունավետ կազմակերպմամբ,
- կայուն զարգացման և սոցիալապես պատասխանատու ներդրումային քաղաքականությամբ:

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերությունը ստեղծվել է 1996թ. Եվրոպական միության "TACIS" ծրագրի շրջանակներում: 2006թ. սեպտեմբերին Կրեդիտ Ագրիկոլ բանկային խումբը դարձել է բանկի ամենախոշոր սեփականատերը: Շնորհիվ իր ֆինանսական կայունության և բարձր հուսալիության՝ Բանկը մեծ հեղինակություն է վայելում ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային ֆինանսական համակարգում:

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերությունը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում առաջատար դիրքեր է գրավում ակտիվների, վարկային պորտֆելի, կապիտալի և շահույթի ցուցանիշներով:

Ընդհանուր տեղեկություններ

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակում մասնակիցների և պետության կողմից վերջիններիս համար կատարված կուտակային վճարները ուղղվելու են մասնագիտացված և անկախ ակտիվների կառավարիչների կառավարմանը՝ ապահովելու մասնակիցների կենսաթոշակային ակտիվների արժեքի կայունություն և աճ: Կենսաթոշակային ֆոնդերի փայերի սեփականատերերը մասնակիցներն են: Մասնակիցներին առաջարկվում են 3 տեսակի ֆոնդեր, որոնցից յուրաքանչյուրն ունի կառավարման կանոններ և սահմանափակումներ՝ ուղղված ֆոնդի ակտիվների արժեքի կայուն և երկարաժամկետ աճի ապահովմանը:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կայուն եկամտային պարտադիր կենսաթոշակային ֆոնդ (կրճատ՝ ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ կայուն եկամտային ֆոնդ)

- **Ռիսկի աստիճանը՝** ցածր,
- **Արտարժութային ներդրումները՝** 25%,
- **Բաժնային արժեթղթերում ներդրումները՝** 0%:

Ֆոնդի հիմնական նպատակը ակտիվների հնարավոր լավագույն եկամտաբերության ապահովումն է՝ ներդրումներն ամբողջությամբ ուղղելով դեպի ֆիքսված եկամտային պարտքային գործիքներ: Տեղական շուկայում դրամային ներդրումները կարող են իրականացվել պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ինչպես նաև բանկային ավանդներում: Դիվերսիֆիկացիայի նպատակով պորտֆելի մինչև 25 տոկոսը կարող է ներդրվել արտարժույթով արտահայտված դրամական շուկայի գործիքներում, պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ինչպես նաև համանման ներդրումային քաղաքականություն ունեցող ներդրումային այլ ֆոնդերում: Բացառությամբ վերոնշյալ ներդրումային ֆոնդերի փայերի՝ կայուն եկամտային ֆոնդի միջոցները չեն կարող ներդրվել բաժնային այլ արժեթղթերում: Ածանցյալ գործիքները կարող են կիրառվել միայն հեջավորման նպատակով:

Պորտֆելի ներդրումների թիրախային կառուցվածքն է՝

- ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսեր՝ 60%,
- բանկային ավանդներ՝ 15%,
- արտարժույթով արտահայտված պարտատոմսեր՝ 25%:

Ծանոթություն: Պորտֆելի ներդրումների թիրախային կառուցվածքը չի ենթադրում, որ օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափերի ներքո այլ ներդրումներ չեն կարող իրականացվել:

Ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1%-ը:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ պահպանողական (կոնսերվատիվ) պարտադիր կենսաթոշակային ֆոնդ (կրճատ՝ ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ պահպանողական (կոնսերվատիվ) ֆոնդ)

- **Ռիսկի աստիճանը՝** միջին,
- **Արտարժութային ներդրումները՝** 40%,
- **Բաժնային արժեթղթերում առավելագույն ներդրումները՝** 25%:

Ֆոնդի հիմնական նպատակը ակտիվների հնարավոր առավելագույն եկամտաբերության ապահովումն է: Տեղական շուկայում դրամային ներդրումները կարող են իրականացվել պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ինչպես նաև բանկային ավանդներում: Դիվերսիֆիկացիայի նպատակով պորտֆելի մինչև 40 տոկոսը կարող է ներդրվել արտարժույթով արտահայտված դրամական շուկայի գործիքներում, պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ինչպես նաև ներդրումային ֆոնդերում և բաժնետոմսերում: Երկարաժամկետ եկամտաբերության ապահովման նպատակով ֆոնդի ակտիվների մինչև 25%-ը կարող է ներդրվել բաժնետոմսերում և բաժնետոմսերի ֆոնդերում: Ածանցյալ գործիքները կարող են կիրառվել միայն հեջավորման նպատակով:

Պորտֆելի ներդրումների թիրախային կառուցվածքն է՝

- ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսեր՝ 50%,
- բանկային ավանդներ՝ 10%,
- արտարժույթով արտահայտված պարտատոմսեր՝ 25%,
- արտարժույթով արտահայտված բաժնային արժեթղթեր՝ 15%:

Ծանոթություն: Պորտֆելի ներդրումների թիրախային կառուցվածքը չի ենթադրում, որ օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափերի ներքո այլ ներդրումներ չեն կարող իրականացվել:

Ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1.1%-ը:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ հավասարակշռված պարտադիր կենսաթոշակային ֆոնդ (կրճատ՝ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ հավասարակշռված ֆոնդ)

- **Ռիսկի աստիճանը՝** բարձր,
- **Արտարժութային ներդրումները՝** 40%,
- **Բաժնային արժեթղթերում առավելագույն ներդրումները՝** 50%

Ֆոնդի հիմնական նպատակը ակտիվների հնարավոր առավելագույն եկամտաբերության ապահովումն է՝ ներդրումներն ուղղելով դեպի ֆիքսված եկամտային պարտքային գործիքներ և բաժնային արժեթղթեր: Տեղական ներդրումներն կարող են իրականացվել պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ինչպես նաև բանկային ավանդներում: Դիվերսիֆիկացիայի նպատակով պորտֆելի մինչև 40 տոկոսը կարող է ներդրվել արտարժույթով արտահայտված դրամական շուկայի գործիքներում, պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ներդրումային ֆոնդերում և բաժնետոմսերում: Երկարաժամկետ եկամտաբերության ապահովման նպատակով ֆոնդի ակտիվների մինչև 50%-ը կարող է ներդրվել բաժնետոմսերում և բաժնետոմսերի ֆոնդերում: Ածանցյալ գործիքները կարող են կիրառվել միայն հեջավորման նպատակով:

Պորտֆելի ներդրումների թիրախային կառուցվածքն է՝

- ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսեր՝ 50%,
- բանկային ավանդներ՝ 10%,
- արտարժույթով արտահայտված պարտատոմսեր՝ 10%,
- արտարժույթով արտահայտված բաժնային արժեթղթեր՝ 30%:

Ծանոթություն: Պորտֆելի ներդրումների թիրախային կառուցվածքը չի ենթադրում, որ օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափերի ներքո այլ ներդրումներ չեն կարող իրականացվել:

Ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1.3%-ը:

Կենսաթոշակային ֆոնդերի գործունեության հետ կապված պահանջները սահմանված են «Կուտակային կենսաթոշակների մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքներով և դրանցից բխող նորմատիվ իրավական այլ ակտերով: